



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» փետրվարի 2018 թվականի N 19/19

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ԹԻՎ 4/5
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 12/2 որոշման 1-ին և 2-րդ կետերով, 2018 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17/1 որոշման 2-րդ մասի 5-րդ կետով, ինչպես նաև ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի գործունեության ծրագրում լրացում կատարելու մասին 2018թ. դեկտեմբերի 12-ի թիվ 19/1 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. 2019 թվականից վերսկսել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում կատարված հաշվեքննությունը:

2. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/5 որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հանձնարարել ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության գործունեությունը համակարգող ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանին՝ ապահովել հաստատված հաշվեքննության առաջադրանքի հիման վրա հաշվեքննության իրականացումը:»:

3. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/5 որոշման հավելվածի 5-րդ, 7-րդ և 8-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Հաշվեքննության կատարման ժամկետը՝ 2018թ. հոկտեմբերի 22-ից մինչև 2019թ. մարտի 29-ը ներառյալ:

7. Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչություն:

8. Հաշվեքննություն իրականացնող պաշտոնատար անձինք՝

Յոթերորդ վարչության պետի ժ/պ

Փափազյան Խաչիկ


գլխավոր մասնագետներ

Փանոսյան Գագիկ
Դավթյան Հերբերտ
Հովհաննիսյան Արմեն

Վարչության պետի
խորհրդականներ

Մարգարյան Վահե
Բեջանյան Հայկ
Պարոնյան Մանուշակ»:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ



Լ. ՅՈՒԼՅԱՆ